

ՄԱՐԿ ՆՇԱՆՅԱՆ «ԱՐՉԱՎԻՐՔԻ ԳՐՈՂՆԵՐ»¹

ԿԱՄ

ԳՐԱԿԱՆ ԵՐԿԻ ԱԶԱՏԱԳՐՄԱՆ ՇՈՒՐՋ

(Գրախոսություն)

Մարկ Նշանյանի «Արհավիրքի գրողներ» հետազոտությունը, որի հարցադրումների կանոնակարգումն ու ապականոնացումը բխում են հետազոտման առարկա հանդիսացող գրական երկերի էությունից, միտված է այդ երկերում արտացոլված նախնական ճշմարտության բացահայտմանը, որի ընթացքում կիրարկվում են այդ ճշմարտությունը «փոխարինումներից» (Է. Յուսերով) զտելու, ավանդական գլխավորի և այլընտրանքային երկրորդականի տեղերի հարափոփոխության և խաչաձևումների (ergon-parergon) մեթոդները:

Յետազոտության գլխավոր՝ գրականագիտական արժեքներն են ճշմարիտ հարցադրումները և նախնական ճշմարտության կենդանի որոնումները՝ ի հակադրություն հանրագիտարանային գիտելիքի: Այն այլընտրանքային հարցադրումներ է անում, որոնցից բխող ճշմարտությունն արդեն որոշակի եզակի իդեալական սինթեզն է իրականության, ստեղծագործության և հետազոտության: Ընդ որում, հետազոտությունը տեղակայված է երկու տարածական հարթությունների հատման եզրին՝ մի կողմից՝ այն համաշխարհային մշակութային ավանդույթների՝ Աստվածաշնչի, անտիկ մշակույթի, արդի փիլիսոփայության և գրականագիտության տարածքին է պատկանում և իր վրա է վերցնում մարդու՝ կենսոլորտում արձանագրված բոլոր նախնական մեղքերն ու դրանց քավությունը, մյուս կողմից՝ հարցականի տակ է դնում ցարդ գոյություն ունեցող մեթոդներն ու ավանդույթները՝ նոր, աննախադեպ ճշմարտության որոնումներում, մի կողմից՝ այն անցյալի «փորձառության տարածքում» է, մյուս կողմից՝ ընդհատում է «պատմության շարունակական համասեռությունը»՝ հանուն ապագայի «սպասումների հորիզոնի» (Վ. Բենյամին):

Գրքի վերնագիրն իսկ՝ «Արհավիրքի գրողներ», ենթադրում է երկու փոխկապակցված, սակայն և որոշակի սահմաններում միմյանց փոխբացառող ոլորտների՝ գիտության և արվեստի, մասնավորապես՝ պատ-

մության և գրականության, ինքնիշխանության, ինչպես նաև՝ հարաբերման եզրերի ուսումնասիրության, պատմական իրականության՝ իբրև գրական երևույթի փոխակերպման, արվեստի իրական ստեղծագործության մեջ՝ ժամանակի և հավերժության միավորման (Բողլեր) և արվեստագետի անձի հավատաքննության հարցեր (Գ. Մահարու դեպքում՝ «Այլովոլ այգեստաններ» վեպի վերահրատակության փաստին առնչվող, Վ. Թոթովենցի դեպքում՝ բռնատիրական վարչակարգին գրողի ենթակայության, ենթակայության ձևացման և գրական երկի վրա այդ ձևացման ազդեցության խնդիրներ): Հետազոտությունը կարևորում է Արհավիրքը ոչ իբրև պատմական փաստ, այլ դիտարկում «արհավիրքի» գրական արտացոլումները, դրա փոխակերպումը գրականության՝ ողբասացության միջոցով, որը փաստի ողբասացություն լինելուց առաջ՝ վերջերգ է, հրաժեշտ պատմության, ժամանակի գերակայության ոլորտին և մուտք գրականության, հավերժության ոլորտ: Ուսումնասիրությունը քննության է առնում նաև՝ իրականության գեղարվեստական մարմնավորումը հոգու սուբյեկտիվ զգայությունների և այդ զգայությունների օտարման միջոցով, երբ փոխհամաձայնում են պատմությունն ու գրականությունը և գտնված է ճշմարիտ հարաբերակցությունը, աներևույթ եզրը՝ պատմության ու գրականության միջև և կամ Աղետի զուտ վերապատկերումը, երբ պատմությունն ու գրականությունը՝ առաջինը՝ միֆականացման, երկրորդը՝ պատմա-նկարագրա-վերարտադրողականության հետևանքով, փոխբացառում են իրենք իրենց և միմյանց: Ուսումնասիրությունը, սակայն, հետազոտում է լոկ մասնակի, հարաբերական փոխակերպման կամ կենտրոնացման դեպքեր, երբ պատմական փաստի փոխակերպման հիմքում իրականության վերարտադրությունն է՝ անգամ իբրև ողբասացություն՝ քննության չառնելով պատմական փաստի աբստրահումը, լրիվ կամ ամբողջական փոխակերպումը, ապակենտրոնացումը կամ սուբլիմացիան՝ տրանսցենդենտ արարում, որի հիմքում արդեն երևակայությունն է, որտեղ գրականության և իրականության փոխհարաբերությունը խիստ պայմանական է, դրանց նույնականությունը՝ նվազագույն, իսկ հատման եզրերը՝ մտացածին (գլխավորապես՝ Ե. Չարենցի ստեղծագործություններում):

Հետազոտության առանցքն են կազմում Եղիշե Չարենցի, Գուրգեն Մահարու, Ջապել Եսայանի և Վահան Թոթովենցի ստեղծագործությունները: Աղետի գրական կերպավորման ուսումնասիրությունը նշված գրողների երկերում մի կողմից՝ միտում ունի գրականության ապաքաղաքականացման, ապապատմականացման, մյուս կողմից՝ պատմության ապահեբոսականացման ու ապաառասպելականացման և ազգային ավանդույթի ապամիֆականացման: Ուսումնասիրվող գրողները սերնդա-

կից են ու միավորված՝ աքսորի, ծերեակալման, մահվան դաժան դատապարտումներով և, որ հետազոտության առանցքն է, Աղետի պատմական փաստի ազդեցության ոլորտներով, դրա գրական մարմնավորումներով, սակայն տարբեր՝ գրականության և արհավիրքի իրենց հարաբերումներում և իրենց առջև դրված խնդիրներով: Պատմության և միֆի միահյուսման և տարանջատման (Ե. Չարենց «Ձրահապատ Վարդան Ջորավար»), երգիծանքի և ողբասացության միջոցով՝ առասպելի նկատմամբ պատմության առաջնայնության հաստատման (Ե. Չարենց «Երկիր Նաիրի», Գ. Մահարի՝ էպիկականի, ֆարսի և ողբերգականի միահյուսումը «Այրվող այգեստաններում»), պատմության «ապահերոսականացման» (Ե. Չարենց «Պատմության քառուղիներում»՝ կապված անցյալի «անանցյալականության» ու «անժողովուրդ և գահազուրկ» արքաների հետ, Գ. Մահարու «Այրվող այգեստաններում»՝ դիալոգիզմի սկզբունքով հարաբերումն Աղետի տարիներին ազգային-ազատագրական պայքարին և դրանում կուսակցությունների ունեցած ոչ միանշանակ դերին) իրականության և խաղի, պատմական փաստի՝ իբրև գրական ակտի փոխակերպման՝ իբրև կորցրածի ողբի, ողբասացության (Ե. Չարենց «Կոմիտասի հիշատակին»՝ Կոմիտասի և բանաստեղծի հոր նույնացման, կորցրած հոր, հայրենիքի, տան և հացի, միֆի, ինչպես նաև զուտ չունեցածի ողբասացության, էսթետիզացիայի և հոր մահով լոկ հնարավոր դարձած վերադարձի, հարության, հայրենիքի վերագտնման գաղափարները, Գ. Մահարու «Այրվող այգեստաններում»՝ կորցրած հոր, հայրենիքի ողբասացության գաղափարը, Ջապել Եսայանի «Ավերակներուն մեջ»-ի դիտարկումը՝ իբրև ողբասացություն, սգո կոթող, «անսահմանի և անսահմանելի» արտահայտություն՝ ի հակադրություն Զ. Եսայանի «Նահանջող ուժեր» և Վահան Թոթովենցի «Կյանքը հին հռովմեական ճանապարհների վրա» վեպերի, որտեղ առկա է պատմական փաստի լոկ վերարտադրում առանց փոխակերպման՝ առաջինը դիտարկվում է իբրև փաստական վկայություն, ազգային տուրքի արտահայտություն, իսկ երկրորդը՝ իբրև նոստալգիա, որ չի փոխակերպվել ողբի, հետևաբար՝ երկուսն էլ արվեստի իրական ստեղծագործություն չեն), առասպելի՝ պատմությունից զորեղ գտնվելու («Դոֆին նաիրական») և զոհ/զոհաբերություն/նպատակ փոխակերպումների՝ գոյության զոհաբերման միջոցով գոյի հաստատման (էթնիկականության զոհաբերումը՝ հանուն էթնիկականությունից վեր գոյության: Զ. Եսայանի «Ավերակներուն մեջ»-ի օրինակով) աճանցյալ խնդիրները, որոնցով հագեցած է հետազոտությունը, նպաստում են հիմնական կոնցեպցիայի առավել համակողմանի զարգացմանը:

Ուսումնասիրվող գրողների ստեղծագործությունների հետազոտման ընթացքում կարևորվում են գրական երկի ապաքաղաքականացման և ապապատմականացման միջոցով դրա ինքնիշխանության հաստատումը (Գ. Մահարի «Այրվող այգեստաններ»), բանաստեղծական տիրույթների բացարձակացումը և բանաստեղծ-մարգարեի առաքելական նշանակությունը (Ե. Չարենց «Էպիկական լուսաբաց»)՝ որպես բառի, հետևաբար նաև ժամանակի տիրակալի, դարաշրջան կերտողի, անցյալի և ապագայի հանդեպ պատասխանատվություն, (հոգացություն, *Sorge* (հայդեգերյան)) կրողի և որպես հիմնական օրենսդրի՝ պատմությունն իբրև ժամանակի ողբասացություն սահմանողի: Արվեստը համարվում է աղետալից ողբասացություն, իսկ բանաստեղծությունը բյուրեղացվում և հակադրվում է պատմությանն ու, իրավամբ, համարվում ինքնիշխան, ինքն-իր-համար, ինքնաբացահայտող, բացարձակ իր տիրույթներում և ազատ մոտիվացիայից, քարոզչությունից և պարտականությունից: Գրական գործընթացը դիտվում է նաև իբրև գրողի ինքնազատում (Գ. Մահարին «Այրվող այգեստաններում» ինքնազատվում է կյանքի տևողություն ունեցող հոր մահվան և հայրենիքի կորստի կսկիծից, Ջ. Եսայանը՝ հայրենակիցների հանդեպ տածած կարեկցանքից, վշտից ու պարտականությունից), իսկ հիշողության ուժը, որն ազատում է բերում, ոչ թե ներկաներին անցյալի իշխանությունից ազատելու, այլ ներկաներին անցյալի հանդեպ մեղքի զգացողությունից ազատագրելու նշանակություն ունի (Յ. Դաբերմաս):

Որոշակի օբյեկտիվ բնական պայմանների հետևանքով, սակայն, հետազոտությունը համարվում է հավելյալ գործառույթներով, որոնք զուտ գրականագիտական հարթությունը զուգահեռում են մեկ այլ՝ ներկայացուցչական-նկարագրական (representative/descriptive) հարթությանը: Ազգությամբ հայ և աշխարհաքաղաքացի լինելու (աշխարհաքաղաքացիությունը ոչ իբրև գիտակցական ընտրության մշակութաքաղաքական եզր, այլ իբրև էթնիկական ծագման, աշխարհագրական տեղանքի և լեզվամտածողության հակասական միասնության հետևանքով պարտադրված ընտրություն) պատասխանատվությունը և ո՛ւմ-ինչո՛ւ-հասցեագրելու հարցադրումը պայմանավորում են զուտ մաքուր գրականագիտությունից հեղինակի շեղումը (անգամ հանուն այդ մաքուր գրականագիտության կատարված հետազոտությունում) և Մարկ-Նշանյան-Երևույթը, որն ավելին է, քան գրականագետ-թարգմանիչ-դասախոսի գործառույթային ամփոփ նշանակությունը: Գրականագետի ազգային գիտակցության օբյեկտիվ արտահայտություն հանդիսացող հավելյալ գործառույթները տվյալ դեպքում անհնար են դարձնում զուտ գրականագիտական հետազոտության գոյությունը՝ չխախտելով, սակայն,

գրական երկի բոլոր ածանցյալ գործառույթների մերժման հավատամքը՝ ի հաստատումն հիմնական կոնցեպցիայի՝ գրականության ինքնիշխանության և բացարձակության հաստատման: Այդ գործառույթները, միաժամանակ, հետազոտության ներկայացուցչական-նկարագրական պատմաքաղաքական դիսկուրսով և կենսագրափաստագրական ծանոթագրություններով հագեցած և պատմաքննադատական՝ վերագգային օբյեկտիվ-գրական ուղղվածության լրացուցիչ միտումների պատճառ են հանդիսանում: Գիտակցված պարտավորությունը, թարգմանչի հայացքը և Բառի նախնականության իմաստավորումը պայմանավորում են Մարկ Նշանյանի խստահայեցությունն ու անօրինակ բնօրինակային ճշգրտությունը բառերի թարգմանության հարցում՝ պայմանավորելով բառի անվերջ ստուգաբանությունների և հոմանիշների զուգահեռներում հայտնաբերումը հայերեն բառերի անգլերեն ճշգրիտ համարժեքների, որոնք ընտրվում են ոչ պարզ բառարանային սկզբունքով, այլ հնարավորինս կարևորելով այդ բառերի համարժեք «...տոնը, ուժը, մոդուլացիան, տեմպը... երաժշտությունը՝ բառի հետևում, կիրքը՝ այդ երաժշտության հետևում» (Նիցշեի նամակը Բրանդեսին):

Գրականության և իրականության փոխհարաբերության հարցերը և գրականության ապապատմականացման կոնցեպցիան շեշտվում է «Այրվող այգեստաններ» վեպի շուրջ ծագած քննադատական վիճաբանությունների պատմության միջոցով: Ներկայացվում են ինչպես 1993-1994թթ. գրված հոդվածներն ի պաշտպանություն «Այրվող այգեստաններ» վեպի (Ա. Ջաքարյան, Ռ. Իշխանյան), այնպես էլ այն հոդվածները (1967 և 1993թթ.), որտեղ ոտնահարելով գրական երկի ինքնիշխանությունը, գրական երկին ներկայացվում են քաղաքական, կուսակցական, պատմական, ազգային և բարոյական պահանջներ (Նորենց, Պ. Սևակ (ըստ Անտոնինա Մահարու վկայությունների), Մ. Մխիթարյան, Գ. Անանյան, Ս. Թոփչյան): Համընդհանուր հալածանքների հետևանքով մեծ գրողը ոչ միայն մարդկային ծանր տառապանքներ է կրում, այլ համաձայնում է վերահրատարակել գիրքը. ձախողված վերահրատարակություն, որի հետևանքով անհաջող փոփոխման են ենթարկվել ոչ միայն գեղարվեստական ինքնատիպ, առաջին հայացքից լոկ երկրորդական թվացող մանրամասներ, այլ աղավաղվել է գրքի հիմքը՝ Աղետի պատմական փաստի գրական մարմնավորումն իբրև ողբասացություն (տե՛ս Մարկ Նշանյանի կատարած համեմատական վերլուծությունը գրքի երկու իրատարակությունների վերաբերյալ, էջեր 148-164):

Հայ գրականագիտության մեջ տեղ գտած իրականություն/խաղ/տրանսցենդենտ տեսիլք հասկացությունների շփոթման, ավանդույթին ու միջականացված պատմությանը՝ արվեստի համապատասխանեց-

ման, բացարձակի պարզունակացման, ստեղծագործության ճշմարիտ էության աղավաղման և բարոյական, ազգային կամ դաստիարակչական գործառույթներ պարտադրելու միջոցով՝ արվեստի ստորադրման փորձերը հաճախ հակազդեցություն են առաջ բերում, որտեղ կրկին անգամ աղավաղվում է արվեստի ճշմարիտ էությունը՝ այս անգամ արևմտյան կեղծ ազատամտության և սեմսացիամոլության հետևանքով: Դրա մի օրինակ է Չարենցի վերաբերյալ Ջեյմս Ռասելի հոդվածը² (վերոհիշյալ հոդվածը նշված է նաև Մ. Նշանյանի «Արհավիրքի գրողներ» հետազոտության գրականության ցանկում (էջ 375)՝ նվիրված Ա. Պուշկինի ծննդյան երկու հարյուրամյակին, որի առանցքն է բանաստեղծի՝ համամարդկային մարգարեական առաքելության կոնցեպցիան՝ Աստվածաշնչից մինչև Ս. Թ. Զոլերիջ, Ա. Պուշկին և Ե. Չարենց: Սակայն Ե. Չարենցի ստեղծագործության հաճախ ճշմարիտ և հետաքրքիր հետազոտությունն արժեզրկում են Ջ. Ռասելի սուբյեկտիվորեն անհիմն հայտարարությունները, որոնք ծախողված են «ազգային բարեպաշտության» երևույթին հակազդելու իրենց հավակնություններում, նույնական (աղեկվատ) են այդ երևույթին և ընդամենը միևնույն երևույթի, այլ դրսևորումներն են: Ջ. Ռասելի հոդվածում ջերմ արծագանջ գտած Դ. Հովհաննիսյանի և Մ. Մարկոսյանի (էջ 27) հայտարարությունն այն մասին, որ «եթե Չարենցն արևմուտքի բանաստեղծ լիներ, նրա արատները և ոչ ուղղափառ պահվածքը հետազոտության կենթարկվեին, փաստերը կներկայացվեին: Սակայն նա այդպիսին չէր, և սովետական բռնատիրությունը, որ ճնշել և կործանել է նրան, փոխարինվել է ազգայնամոլական գաղափարախոսությամբ և կրոնական շովինիզմով, որն ուրույն ձևով է ճնշում և աղավաղում նրան», նույն հաջողությամբ կարելի է ավելացնել՝ «և արևմտյան կեղծ ազատամտությամբ...»: Ջ. Ռասելը, վերոհիշյալ հոդվածում արտահայտած իր անհիմն և սուբյեկտիվ կարծիքը՝ հավատի և կրքի, ոգեղենության և սեռականության (այն էլ՝ երկսեռականության, որ կասկածելի պատճառներով, համարվում է ոչ թե հիվանդության, այլ՝ ազատության արտահայտություն)՝ իբրև ներդաշնակ ամբողջության միավորման վերաբերյալ, ոչ միայն ներկայացնում է իբրև բացարձակ ճշմարտություն, այլ վերագրում է Ե. Չարենցին: Ջ. Ռասելի հայտարարությունները Չարենցի կարծեցյալ բխեցսուալության առնչությամբ՝ հիմնված Ե. Չարենցի անտիպ և նորահայտ էջերի վրա, անհիմն են և գրականության հետ առնչություն չունեցող:

Նախևառաջ՝ Ե. Չարենցի անձի կամ նրա ստեղծագործության որևէ պիտակավորում հակասում է Չարենցի ճշմարիտ, հախուռն էությանը, որ հակառակ է բոլոր -իզմերին և -ականներին՝ կուսակցական, բարոյա-

կան, կրոնական, սեռական կամ ազգային (նույն հոդվածում, Չարենցի կողմից հայ բանաստեղծներին մերժելու և քննադատելու, այնուհետև ընդունելու և մեծարելու, նրա կոմունիստական և հակա- լինելու փաստերը մեջբերելով, ինքը՝ Ռասելը, ճշմարիտ ընդհանրացում է անում՝ տարօրինակորեն այդ ընդհանրացումից դուրս թողնելով Չարենցի «բիսեքսուալության» հարցը. «...Նրան պետք է ընդունել ամբողջությամբ, այնպես, ինչպես նա կա՝ առանց պարտադրելու այս կամ այն գաղափարախոսական զսպաշապիկը...», էջ 27): Չարենցի ողջ ստեղծագործությունը կեցության առեղծվածի փնտրտուք է, տիեզերական ճանաչում՝ անվերջանալի մետամորֆոզների և հակասությունների, իրականության ու տեսիլքի մշտապես միախառնված սահմանների միջոցով՝ նույնքան քրիստոնյա, որքան հեթանոս, աստվածապաշտ ու «մեղսավոր» կոմունիստական և հակա-: Չարենցի ընկալումներում տիեզերքը ներդաշնակ, էներգետիկ ամբողջություն է՝ իր՝ մշտապես փոխակերպվող, համարժեք սուբստանց-մոդելներով, ուր նույնական են լույսն ու մութը, աղմուկն ու լռությունը, սերն ու ատելությունը, կյանքն ու մահը, մարդկային երկու՝ ին և յան սկիզբները: Այդպես պետք է ընկալել ստեղծագործական սուբլիմացիայի ենթարկված Չարենցի՝ փորձառություններով հարուստ ողջ կյանքը, որտեղ Ռասելի թվարկած հաշիշը, ալկոհոլը, կնոջ կամ գուցե նաև պատանու սերն ու գեղեցկությունը գուցե զառանցանք է, իսկ գուցե՝ աշխարհաճանաչողության, ենթագիտակցականի արթնացման, իմանենտի միջոցով տրանսցենդենտի ընկալման ու հանճարեղ արտացոլման միջոց:

Երկրորդ՝ այդ անտիպ էջերի սուբյեկտիվ մեկնության հետևանքով արված հայտարարությունը, անկախ դրա ճշմարտացիությունից անգամ, արհեստականորեն պարտադրվում է դրսից, չի բխում իրական Չարենցի էությունից և նրա ստեղծագործության բացահայտման բանալիների թվին չի պատկանում, հետևաբար՝ լոկ միտումնավորության և «արևմտյան» սին սենսացիամոլության արդյունք է, որ նսեմացնում է հոդվածի արժեքավոր գաղափարները: Կարծում ենք, որ Չարենցի ստեղծագործության լիակատար ժողովածուն համալրելու, ասեկոսներից, թյուր մեկնություններից խուսափելու համար՝ հարկ է հրատարակել այդ էջերը, նույնիսկ եթե դրանք Չարենցի ընտրանին չեն կազմում: Եվ վերջապես, կարծում ենք, որ արվեստի ստեղծագործությունը պետք է ազատագրել ինչպես «ազգային բարեպաշտությունից», այնպես էլ՝ արևմտյան ինքնանպատակ «ազատամտությունից»:

Վերադառնալով Մարկ Նշանյանի «Արիավիրքի գրողներ» հետազոտությանը՝ անկախ նրանում տեղ գտած որոշ դասակարգումների կամ

սահմանումների օբյեկտիվության աստիճանից, այս ուսումնասիրության գլխավոր արժեքը ուրույն՝ գրականագիտական այլընտրանքային հետազոտման մեթոդով՝ պատմության ապամիջականացման ու ապահերոսականացման, ինչպես նաև՝ գրական երկերի ապապատմականացման, ապաքաղաքականացման՝ ազատագրման միջոցով՝ պատմության և գրականության ոլորտների տարանջատումը և փոխհամաձայնեցումն է:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Marc Nichanian "Writers of Disaster" (Armenian Literature in the Twentieth Century). Volume One. The National Revolution. Gomidas Institute Princeton & London, 2002.

2. James R. Russell "Ch' arents' The Prophet". (Journal of the Society for Armenian Studies 11 (2000), pp. 11-38.